# Շրջակա միջավայրի ազդեցությունը մարդու առողջության վրա.

## Իրավակարգավորումներ, պատճառահետևանքային կապ



*Արթուր Գրիգորյան*

# Օրենսդրություն

ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք.

ՀՀ օրենքը «Բնապահպանական վերահսկողության մասին».

ՀՀ օրենքը «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին».

# Պատասխանատու պետական մարմիններ

- Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն.
- Բնապահպանական պետական տեսչություն.
- Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն .

# Պատճառահետևանքային կապ
# Case Control Study

2008թ. տվյալներով Ալավերդիում թոքի քաղցկեղով հիվանդների թիվը 16 անգամ ավելի է, քան Գավառում

Կապար - ազդում է նյարդային համակարգի վրա, կարող է առաջացնել մտավոր թերզարգացվածություն, տեսողության, լսողության և խոսքի խախտումներ, ազդում է երիկամների և ստամոքսի, նյութափոխանակության համակարգերի վրա.

Պղինձ - կարող է հանգեցնել օրգանիզմում ուռուցքային գոյացությունների զարգացմանը.

Կադմիում - առաջացնում է կմախքի տձևացում, թոքերի ախտահարում.

# Ինչու՞ է աճում քաղցկեղով հիվանդների թիվը

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2012թ.-ին գրանցվել է 595 չարորակ նորագոյացություններով հիվանդ.



2011թ.-ին գրանցվել է 482 հիվանդ: Չարորակ ուռուցքային հիվանդությունները մեկ տարվա ընթացքում աճել են 113-ով.

2012թ.-ին մահացել է 79-ը հիվանդ, որից միայն 50-ն են եղել հաշվառված.

Առողջապահության նախարարի 26 սեպտեմբեր 2012թ. համար 2148 - Ա հրաման.

# Կատարողական ստանդարտներ
# IFC Performance Standards

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատումը և կառավարումը.

Աշխատանքային պայմանները.

Պաշարների շահագործման արդյունավետությունը և աղտոտման կանխարգելումը.

Համայնքի առողջությունը, ապահովությունն ու անվտանգությունը.

Կենսաբազմազանության պահպանությունը.

# Համայնքի առողջությունը, ապահովությունն ու անվտանգությունը

**Գնահատել՝**

գործունեության հետևանքով առաջացող հնարավոր հիվանդությունները.

**Չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել՝**

Ազդակիր համայնքի բնակչության առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող հնարավոր վնասը.

**Ապահովել՝**

Առաջնային էկոհամակարգային ծառայությունները (ջրամբարներ, պաշտպանիչ անտառներ).

Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը և պատրաստվածությունը դրան.

# Անհրաժեշտ Քայլեր

*Շրջակա միջավայրի ազդեցության հետ պայմանավորված հիվանդությունների ցանկի հաստատում (ԱՀԿ-ն ունի հաստատված ցանկ).*

*Ազդեցության գնահատման մեթոդաբանության մշակում (այդ հիվանդություններն առաջացնող պայմանների և ցուցիչների հաշվառում).*

*Թիրախային խմբերի ուսումնասիրություն՝ ելնելով համանման բնակլիմայական պայմաններում բնակչության առողջության ցուցանիշներից.*

*Սահմանել կանխարգելիչ միջոցառումների և պատճառված վնասի գնահատման ու փոխհատուցման նորմատիվային համապարտադիր մեխանիզմներ:*